ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. 2021 թվականի հունվարի 29-ին ժամը 12:30-ին Թալինի համայնքապետարանում (հասցեն՝Ք.Թալին, Գայի փ. 1, 3-րդ հարկ) անցկացնել մրցույթ, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իավունքով օգտագործման տրամադրոլու համար:

Մրցույթի առարկա է հանդիսանում՝

Լոտ . 1. Ք.Թալին, 02-003-0208-0050 ծածկագրով 5.7269 հա գյուղատնտեսական նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողամասը: Հողամասը վարձակալությամբ տրամադրվում է օգտագործման գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով, 25 տարի ժամկետով: Հողամասի մեկնարկային վարձավճարն է տարեկան 60000 դրամ: Մրցույթի նախավճարի չափը սահմանվում է հողամասի մեկնարկային վարձավճարի 5%-ի չափով՝ 3000 դրամ, որը պետք է վճարվի մրցույթի անցկացման օրը, մրցույթն սկսվելուց առաջ: Մրցույթային քայլի չափը (նվազագույն հավելումը) սահմանվում է մեկնարկային վարձավճարի 5 %-ի չափով՝ 3000 դրամ : Հողամասից ոչ հեռու առկա է ճանապարհ: Վարձակալությամբ օգտագործման տրամադրվող հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և չի առաջացնում սերվիտուտ

Մրցույթն անցկացվում է բաց, որին մասնակցելու համար ցանկացողները յուրաքանչյուր լոտի համար առանձին ներկայացնում են հայտ, մասնակցության համար վճարի անդորագիր, որը սահմանված է հինգ հազար դրամ և անձնագիր :

-Եթե մասնակիցը չի հաղթել մրցույթում, նախավճարի գումարը վերադարձվում է նրան, իսկ մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում :

-Մրցույթի հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ :

-Մրցույթում հաղթած անձը արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում, կորցնում է մուծած նախավճարը, ինչպես նաև մրցույթը չկայանալու դեպքում զրկվում է հողամասը առանց մրցույթի վարձակալելու իրավունքից :

-Մրցույթում հաղթած է համարվում առավել բարձր վարձավճար և պայմաններ առաջարկած մասնակիցը : Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է համայնքի բնակչին կամ համայնքում գրանցված իրավաբանական անձին :

-Հայտերը ընդունվում են երկուշաբթիից-ուրբաթ ժամ 10 :00-17 :00-ն, ընդմիջում 13 :00-14 :00-ն :

-Լոտի ուսումնասիրության համար կարող եք դիմել համայնքապետարան աշխատանքային օրերին՝ ժամը 16 :00-18 :00-ն : Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2021թ-ի հունվարի 22-ը

Թալինի Համայնքապետարան